# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մայիսի 2020 թվականի N 170

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐԻ 20.05.2020Թ. ԹԻՎ 161 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 06.05.2020թ. թիվ 161 որոշումը, 14.05.2020թ. NԿ-14052020-06-0132 գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով՝ ***որոշում եմ***

1. Ստեփանավան համայնքի ղեկավարի 06.05.2020թ. N161 որոշման 2 կետի՝ Վարուժան Ալեքսանի Ներսիսյանի կողմից 1990թ. ինքնակամ կառուցված 115.5 քմ արտաքին մակերեսով բառերից հետո ավելացնել՝ ներքին մակերեսը 98.88:
2. Համայնքի ղեկավարի 06.015.2020թ. N 161 որոշման 3 կետում Բյուզանդի փողոց թիվ 7 բառերից հետո բնակելի տուն բառերը փոխարինել հողամաս բառով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մայիսի 2020 թվականի N **171**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (ՀԷԿՀ) ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 27.02.2020թ. կայացած աշխատանքային խմբի քննարկման արձանագրությունը՝ Ստեփանավանի համայնքային էներգետիկ կառավարման համակարգ (ՀԷԿՀ) ներդնելու, էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումները համակարգելու և համայնքային ենթակայության հաստատությունների կողմից դրանց իրականացումը վերահսկելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Ստեղծել Ստեփանավան համայնքի էներգետիկ կառավարման համակարգող հանձնաժողով (ԷԿՀՀ) համայնքի ղեկավարի խորհրդական Լևոն Աշոտի Քալանթարյանի նախագահությամբ:
2. ԷԿՀՀ նախագահին՝ ներկայացնել առաջարկություններ հանձնաժողովի կազմի վերաբերյալ:
3. Ստեփանավան համայնքի էներգետիկ կառավարման համակարգի կառավարչի պարտականությունները հանձնարարել Եսայի Վարդգեսի Խուբլարյանին:
4. Ստեփանավանի համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին՝
   «Ստեփանավանի Ա. Մարգարյանի անվան Մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի տնօրեն Անուշ Մինասի Ղարաքեշիշյանին,
   «Ստեփանավանի Ա. Ղարիբյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Մարինե Ցոլվերդի Սաքանյանին,
   «Ստեփանավանի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Արտակ Մուշեղի Սաքանյանին,
   «Ստեփանավանի Սոս Սարգսյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի տնօրեն Էմիլյա Հովհաննեսի Քեհինյանին,
   Ստեփանավանի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն Լուդմիլա Հմայակի Էլոյանին,
   Ստեփանավանի թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն Արփիկ Ժորիկի Առաքելյանին,
   Ստեփանավանի թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն Լիլիթ Գրիգորի Գրիգորյանին,
   «Ստեփանավանի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Նարինե Միքայելի Ղարաքեշիշյանին նշանակել պատասխանատու պաշտոնատար անձ ՀԷԿՀ կայացմանը օժանդակելու, իրենց վստահված հաստատությունների էներգաարդյունավետության միջոցառումների (ԷԱՄ) իրականացումն ապահովելու, վառելիքաէներգետիկ ռեսուրսների (ՎԷՌ), ջրի սպառման ծավալների և արժեքի վերաբերյալ

տեղեկատվության հավաքագրման և տրամադրման համար (այսուհետ՝ պատասխանատու անձինք)։

5. Սահմանել համայնքային ենթակայության հաստատությունների կողմից ՎԷՌ, ջրի սպառման ծավալների և արժեքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և համայնքապետարան փոխանցման մեթոդը (էլեկտրոնային կամ առձեռն)։
6. Պատասխանատու անձանց խմբագրելի էլեկտրոնային ձևաչափով լրացնել օբյեկտի տեղեկատվական քարտը՝ ըստ պատասխանատվության ոլորտների և էլեկտրոնային ձևով ուղարկել Ստեփանավանի համայնքապետարան։
7. Սույն որոշման կատարման վերահսկողությունը հանձնարարել համայնքի ղեկավարի խորհրդական Լևոն Աշոտի Քալանթարյանին։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մայիսի 2020 թվականի N 172

### ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0201-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 0.41 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0.01314 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 27.04.2006 թվականի թիվ 570-Ն որոշումը, Ստեփանավան քաղաքային համայնքի 2013թ. հաստատված գլխավոր հատակագիծը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը՝ ***որոշում եմ***

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0201-0001 ծածկագրի տակ գտնվող 0.41 հա հողամասից առանձնացված 0.01314 հա հողամասի նպատակային նշանակությունը համաձայն քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու մասին 2013 թվականին հաստատված Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագծի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի ֆոնդ:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Ճանաչել 0.01314 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:

4. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
5. Վերը նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Վ.Բալայան փողոց թիվ 87/6 հողամաս:
6. Դիմել ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում նշված հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնելու համար:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մայիսի 2020 թվականի N 173

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով՝

*որոշում եմ*

1. Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ծածկագիր (1.1.-1), քաղաքաշինության, հողօգտագործման, արտակարգ իրավիճակների, տրանսպորտի և առևտրի բաժնի պետի՝ ծածկագիր (2.1.-1), ֆինանսատնտեսագիտական, եկամուտների, հաշվառման և հավաքագրման, բաժնի պետի՝ ծածկագիր (2.1.-2), ֆինանսատնտեսագիտական, եկամուտների, հաշվառման և հավաքագրման, բաժնի պետի տեղակալի՝ ծածկագիր (2.2.-1), ֆինանսատնտեսագիտական, եկամուտների, հաշվառման և հավաքագրման, բաժնի գլխավոր մասնագետների՝ ծածկագրեր (2.3.-1, 2.3-2), աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետի՝ ծածկագիր (2.3.-3), աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանի՝ ծածկագիր (2.3.-4), աշխատակազմի գլխավոր մասնագետներ՝ ծածկագիր (2.3.-5, 2.3.-6), համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 2020 թվականի հունիսի 23-ից անցկացնել մրցույթներ:
2. Մրցույթների անցկացման մասին տալ հայտարարություններ WWW.ardarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին:
3. Մրցութային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակից Ռաֆայել Սիմոնյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» մայիսի 2020 թվականի N **174**

### ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՑՈԼԱԿ ՍԱՎԹԱԼՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԱՔՍԻ ՍԱՎԹԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ցոլակ Սավթալյանի և Արաքսի Սավթալյանի հողերից հրաժարվելու մասին 29.01.2020թ. Ս-20 համատեղ դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 100 և 101-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ***

1. Չեղյալ համարել ԱԳԿ կողմից տրված 23.01.2020թ. թիվ 23012020-06-0056, 23012020-06-0055, 23012020-06-0047 անշաժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները և 01.08.2003թ. տրված թիվ 1641131 անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականը:
2. 06-051-0152-0037 ծածկագրի 0.867հա հա խոտհարքը, 06-051-0108-0047 ծածկագրի 1.667 հա խոտհարքը, 06-051-0127-0009 ծածկագրի 0.279 հա խոտհարքը և 06-051-0022-0030 ծածկագրի 0.046 հա բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:
3. Հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մայիսի 2020 թվականի N **175**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 36Ա ՀԱՍՑԵՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Դալիկի Մելիքյանի կողմից ներկայացված դիմումը և 09.10.2019թ.N09102019-06-0073 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ ***որոշում եմ***

1. Ստեփանավան քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 36ա հասցեով՝ բնակավայրերի նպատակային նշանակության և խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Ավետիսյան փողոց թիվ 40:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» մայիսի 2020 թվականի N 176

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 4-ՐԴ ՄԿՐՇ. 16-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Արմենի Մարգարյանի կողմից ներկայացված դիմումը և 15.05.2020թ. N15052020-06-0032 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ ***որոշում եմ***

1. Ստեփանավան քաղաքի 4-րդ միկրոշրջան 16-րդ փողոց թիվ 7 հասցեով՝ բնակավայրերի նպատակային նշանակության և բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան 4-րդ մկրշ. Սարյան փողոց թիվ 7:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» մայիսի 2020 թվականի N **177**

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՓՈՂ. 1 Ա VI ՀԱՍՑԵՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալլա Տատյանց Միխայիլի կողմից ներկայացված դիմումը և 01.09.2010թ. N 2487180 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ ***որոշում եմ***

1. Ստեփանավան քաղաքի Անտառային փողոց 1Ա VI հասցեով՝ բնակավայրերի նպատակային նշանակության և բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Անտառային փողոց 4-րդ նրբանցք թիվ 22:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» մայիսի 2020 թվականի N **178**

### ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ստեփանավան համայնքի 2020 թվականի բյուջեում անհրաժեշտություն է առաջացել կատարել որոշ փոփոխություններ:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «ՏԻՄ» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, առանց բյուջեի ծավալի փոփոխման՝ *որոշում եմ*

Ստեփանավան համայնքի 2020 թվականի բյուջեով նախատեսված «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 1 դաս 1) «4232 – Համակարգչային ծառայություններ» ծախսային հոդվածի գումարից 150 000 ՀՀ դրամ կատարել տեղաշարժ նույն նախահաշվի «4233–Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ» հոդվածի գումարին, «4241–Մասնագիտական ծառայություններ» ծախսային հոդվածի գումարից 108 000 ՀՀ դրամ կատարել տեղաշարժ նույն նախահաշվի «4267 – Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածի գումարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» մայիսի 2020 թվականի N **179**

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 13 ՀԱՍՑԵԻ, ԹԻՎ 012672 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նելլի Նիկոլայի Բաբաջանյանի կողմից ներկայացված դիմումը Ստեփանավան քաղաքի Իսահակյան փողոց թիվ 13 հասցեի անշարժ գույքի միավորի հողամասը կադաստրային քարտեզի մակերեսին համապատասխանեցնելու վերաբերյալ, 25.07.1998թ. N 012672 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը, Ստեփանավան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, Ստեփանավան քաղաքի կադաստրային քարտեզը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ ***որոշում եմ***

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան Իսահակյան փողոց թիվ 13 հասցեի, թիվ 012672 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն կադաստրային քարտեզի և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի, որի մակերեսը կազմում է 0.0408 հա:
2. Ստեփանավան քաղաքի Իսահակյան փողոց թիվ 13 հասցեով՝ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Անտառային փողոց 4-րդ նրբանցք թիվ 33:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«26» մայիսի 2020 թվականի N 180

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵԻ, 06-007-0041-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թազագյուլ Մխակի Մարդոյանի կողմից ներկայացված դիմումը, 10.03.2020թ. թիվ 10032020-06-0063 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ *որոշում եմ՝*

1. Ստեփանավան Գ.Նժդեհի փողոց թիվ 9 հասցեով՝ 06-007-0041-0014 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան, Գ. Նժդեհի փողոց թիվ 9/5:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1,  հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝  stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» մայիսի 2020 թվականի N **181**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0260-0024 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ, ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 21 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ  ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի Կոմիտասի փողոց թիվ 21 հասցեի բնակիչ Աստղիկ Ստեփանի Մնացականյանի կողմից ներկայացված դիմումը, 17.04.1989թ. տրված անշարժ գույքի տեխնիկական անձնագիրը, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.04.2020թ. գործ թիվ ԼԴ1/1398/02/19 դատարանի վճիռը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան 06-007-0260-0024 ծածկագրում գտնվող 587.4 քմ բնակելի կառուցման հողամասի հողհատկացման հիմքերը՝

    ա/ Ստեփանավան համայնքի 06-007-0260-0024 ծածկագրի հողամասի մակերեսը 587.4 քմ

    բ/  հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 587.4 քմ մակերեսով օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասեր ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Աստղիկ Ստեփանի Մնացականյանին և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ  օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. Ստեփանավան համայնքի 06-007-0260-0024 ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝

մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 22.62 քմ ներքին մակերեսով բնակելի տան նկուղային հարկի, 71.58 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 19.42 քմ մակերեսով բաց պատշգամբի, 9.2 քմ ներքին մակերեսով բաղնիքի և 10.12 քմ ներքին մակերեսով մառանի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Աստղիկ Ստեփանի Մնացականյանի սեփականության իրավունքը:

4. Հաստատել վերը նշված անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Կոմիտասի փողոց թիվ 21 բնակելի տուն:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ